ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

*(ԵՊՀ մշակույթի կենտրոնի երգչախումբ)*

*Նվիրվում է ԵՊՀ մշակույթի կենտրոնի հիմնադրման 15-ամյակին*

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 784
ԳՄԴ 85.314
Հ 253

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝
Կարեն Սարգսյան
Ռուբեն Կարասեֆերյան
Կարինե Դավթյան

Հ 253 Հայկական երգերի երգչախմբային մշակումներ / Կազմողներ՝ Կարեն Սարգսյան, Ռուբեն Կարասեֆերյան, Կարինե Դավթյան: Երևանի պետական համալսարանի մշակույթի կենտրոն.- Եր.: ԵՊՀ հրատ., 2021, 116 էջ:

Ժողովածուում զետեղված են ԵՊՀ մշակույթի կենտրոնի երգչախմբի համար երգչախմբի գեղարվեստական ղեկավար Կարեն Սարգսյանի և խմբավար Ռուբեն Կարասեֆերյանի կողմից մշակված հայկական երգային ստեղծագործությունների երգչախմբային տարբերակները:

ՀՏԴ 784
ԳՄԴ 85.314

ISMN 979-0-69380-304-0

© ԵՊՀ հրատ., 2021
© Կազմողի համար, 2021



Երևանի պետական համալսարանում արդեն 15 տարի է գործում է բուհում գեղագիտական ճաշակ զարգացնող և արտալսարանային բազմաբովանդակ կյանք կազմակերպող կարևոր մի կառույց՝ ԵՊՀ մշակույթի կենտրոնը, որն իր գործունեության 15 տարիների ընթացքում կարողացել է կատարել իր առջև դրված բարդ և հայրենանվեր առաքելությունը: Բազմիցս նշել եմ, որ Մշակույթի կենտրոնը ԵՊՀ-ի կարևոր այցեքարտերից մեկն է: Կենտրոնում գործող խմբերով ՀՀ-ում և Հայաստանի սահմաններից դուրս մշտապես իրականացվում են բազմաբնույթ ծրագրեր, որոնց հաջողություններն ու ստացված արձագանքները փաստում են, որ Մշակույթի կենտրոնն արժանի է համարվել Մայր բուհի զարկերակներից մեկը: Կենտրոնի ակտիվ ներգրավվածությունը ԵՊՀ-ի տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացվող հանրային միջոցառումների կազմակերպմանը, թույլ է տալիս ինչպես կենտրոնի սաներին, այնպես էլ մյուս ուսանողներին ինքնադրսևորվել որպես արվեստի ոլորտի ներկայացուցիչներ, ինչը մեծ դերակատարություն ունի միջանձնային հարաբերությունների ճիշտ բալանսավորման գործում:

Պետք է նշեմ նաև կենտրոնի տնօրենի՝ իսկական համալսարանական Կարինե Դավթյանի անմնացորդ նվիրվածության մասին, ով իր կազմակերպչական ունակություններով և մշտապես նորարական մտահղացումներով կյանք է տալիս բուհի մշակութային կյանքին: Համալսարանի այս երիտասարդ, բայց հագեցած կենսագրություն ունեցող կառույցն իր ներդրումն ունի պատվարժան քաղաքացու դաստիարակության և հայրենիքի արժեքները ճիշտ գնահատող սերունդ կրթելու գործում: Ողջունում եմ նաև կենտրոնի երգչախմբի համար արված երգերի մշակումների և 15 տարիների ընթացքում բեմադրված ներկայացումների պիեսների տպագրությունը, սա կարևոր և բացառիկ նախաձեռնություն է և մնայուն արժեք, ինչպես Մայր բուհի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար:

Հանձին Կարինե Դավթյանի՝ շնորհավորում եմ Մշակույթի կենտրոնի ողջ անձնակազմին, բոլոր տարիների սաներին կենտրոնի հիմնադրման 15-ամյակի կապակցությամբ՝ մաղթելով հարատևություն և համալսարանին հեղինակություն բերող նորանոր ստեղծագործական հաջողություններ:

**ԵՊՀ միջազգային համագործակցության**
**և հասարակայնության հետ կապերի գծով**
**պրոռեկտոր՝ Արթուր Իսրայելյան**



Մշակույթը կոչված է մարդու հոգու մաքրման, վերափոխման և հարստացման գործի առաքելությանը, այն լուծում է դաստիարակչական խնդիրներ և ձևավորում աշխարհայացք: Այս գաղափարական հենքի վրա 2006 թ. հունիսին ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ ստեղծվեց մի յուրօրինակ մշակութային օջախ՝ ԵՊՀ մշակույթի կենտրոնը, որն այս տարի բոլորում է իր 15-ամյակը: Կենտրոնի առաջնահերթ խնդիրներն էին բուհի մշակութային կյանքի, համալսարանականների շրջանում անցկացվող մշակութային միջոցառումների համակարգումը, ինչպես նաև ԵՊՀ-ում գործող կառույցների կողմից կազմակերպված միջոցառումների համախմբումն ու դրանց որակական չափանիշների ապահովումը: Հիմնադրման օրվանից կենտրոնն իր առջև նպատակ է դրել մշակութային դաստիարակությամբ կրթել երիտասարդ սերնդին: Այս տարիների ընթացքում ԵՊՀ մշակույթի կենտրոնը տաղանդավոր երիտասարդ ստեղծագործողների համար ստեղծել է նաև իրենց աշխատանքները հանրայնացնելու հնարավորություն՝ փառատոնների և մրցույթների արդյունքում լավագույն ճանաչված ստեղծագործությունները տպագրելով գրական, կերպարվեստի և երաժշտական հեղինակային ժողովածուներում: Կենտրոնի 15-ամյակի առիթով որոշեցինք տպագրել հայկական երգերի երգչախմբային մշակումների այս ժողովածուն, որն իր մեջ ամփոփում է կենտրոնի երգչախմբի խմբավար Ռուբեն Կարասեֆերյանի և գեղարվեստական ղեկավար Կարեն Սարգսյանի կողմից հատկապես մեր երգչախմբի համար արված հայ երգերի երգչախմբային տարբերակները: Կարծում ենք, որ այս ժողովածուն, հասանելի լինելով մասնագիտական լայն շրջանակներում, կարող է օգտակար լինել նաև նմանատիպ այլ երգչախմբերի համար: Պետք է նշեմ, որ նման ծավալի ժողովածու առաջին անգամ է տպագրվում և մեզ համար պատվաբեր է հիմք դնել նման կարևոր նախաձեռնության, որը կդառնա շարունակական:

Ուզում եմ շնորհակալություն հայտնել ԵՊՀ ղեկավարությանը Մշակույթի կենտրոնի կայացման գործում իր կարևոր ներդրումն ունենալու, կենտրոնի կողմից կատարված աշխատանքներին աջակցելու և մեր գործունեությունը կարևորելու համար: Շնորհակալություն եմ հայտնում նաև Կարեն Սարգսյանին և Ռուբեն Կարասեֆերյանին 15 տարիների անխոնջ ու բարձր պրոֆեսիոնալիզմով արված աշխատանքի համար, որն իր արժանի արդյունքներն է տվել, և այսօր մշակույթի կենտրոնի երգչախումբն ունի իր ուրույն դիմագիծը՝ շատ բարձր կատարողականությամբ:

Մեծագույն սիրով և երախտիքի զգացումով շնորհավորում եմ ԵՊՀ մշակույթի կենտրոնի բոլոր տարիների սաներին, աշխատակիցներին, խմբերի ղեկավարներին, գործընկերներին, կենտրոնի հետ համագործակցող մշակութային կառույցներին և անհատներին, համակիրներին ԵՊՀ մշակույթի կենտրոնի ծննդյան 15-ամյակի առիթով՝ ցանկանալով բազում հագեցած աշխատանքային տարիներ և ստեղծագործական հաջողություններ ի նպաստ Հայ մշակույթի զարգացման և մեր երկրի առաջընթացի:

**ԵՊՀ մշակույթի կենտրոնի տնօրեն**
**«Համալսարանական» թատրոն-ստուդիայի գեղարվեստական ղեկավար՝**
**Կարինե Դավթյան**

 

Սիրելի՛ բարեկամներ,

Շնորհավորում ենք Երևանի պետական համալսարանի մշակույթի կենտրոնի հիմնադրման 15-ամյակի կապակցությամբ՝ մաղթելով հարատևություն և ստեղծագործական առաջընթաց իր կարևոր առաքելության ճանապարհին:

ԵՊՀ մշակույթի կենտրոնի հիմնադրման պահից ի վեր մենք հրավիրվել ենք ստեղծելու և ղեկավարելու երգչախումբը, որի գոյության 15 տարիների ընթացքում մենք փորձել ենք ուսանողությանը հասանելի դարձնել հայ երգարվեստի գանձարանը՝ մշակելով բազմաթիվ հրաշալի ստեղծագործություններ հատկապես ուսանողական երգչախմբի համար: Ոչ սովորական այս ձեռնարկը կազմված է ԵՊՀ մշակույթի կենտրոնի երգչախմբի կողմից կատարված ստեղծագործություններից, որոնք մշակվել կամ փոխադրվել են մեր կողմից՝ հարմարեցնելով ուսանողական երգչախմբի կազմին ու հնարավորություններին: Ժողովածուն ընդգրկում է տարբեր ժամանակների հայ կոմպոզիտորների գործեր, ինչպես նաև ժողովրդական, հայրենասիրական, գուսանական և այլ երգեր: Հայ երգարվեստի նմուշների խմբերգային մշակումների և գործիքային տարբերակների բացակայությունը մեծ խնդիր է ստեղծում երգչախմբերի համար: Երկարամյա գործունեության ընթացքում մենք հասկացանք, որ Հայաստանում և Սփյուռքի հայկական գաղթօջախներում նման մի ժողովածուի հրատարակման կարիք կա: Հուսով ենք՝ ձեռնարկն օգտակար կլինի և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում գործող երգչախմբերի համար:

**ԵՊՀ մշակույթի կենտրոնի երգչախմբի**
**գեղարվեստական ղեկավար,**
**ՀՀ վաստակավոր արտիստ,**
**«Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ»**
**շքանշանակիր՝ Կարեն Սարգսյան**

**ԵՊՀ մշակույթի կենտրոնի երգչախմբի**
**խմբավար՝ Ռուբեն Կարասեֆերյան**

# ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ

*Խոսք և երաժշտ.՝ Ս. Լուսիկյանի*
*Մշակումը՝ Ռ. Կարապետփերյանի*

Tempo di marcia




Meno mosso
ճան, որ ապ - րես հա-վետ ու կոչ-վես՝ Ա - զատ Հա - յաս -
տան: Քեզ հա-մար, կյան - քիդ հա-մար, որ - դի - քըդ քար դար -
ճան, որ ապ - րես հա-վետ ու կոչ-վես՝ Ա - զատ Հա - յաս -
տան: Քեզ հա-մար, կյան - քիդ հա-մար, որ -
դի - քըդ քար դար - ճան, որ ապ - րես հա-վետ ու կոչ-վես՝
Ա - զատ Հա - յաս - տան: Քեզ հա-մար,
կյան - քիդ հա-մար, որ - դի - քըդ քար դար - ճան, որ ապ -
րես հա-վետ ու կոչ - վես՝
Ա - զատ Հա - յաս - տան:

Դու՛, մեր երկիր սուրբ հայրենիք,
Կարոտից ծնվել, տուն ես դարձել,
Մեր նախնյաց ձեռքով արարվել,
Դարերով քայլել, մեզ ես հասել:

**Կրկներգ**
Քեզ համար, կյանքիդ համար որդիքդ քար դարձան,
Որ ապրես հավետ ու կոչվես՝ Ազատ Հայաստան:

Սիրուց ծնված մեր հայրենիք
Երազից ծնվել, հույս ես դարձել,
Մեր որդոց ձեռքով կարարվես,
Դարերով կանցնես, հավետ կապրես:

# ԱԶԳ ՓԱՌԱՊԱՆԾ

*Խոսք՝ Ա. Գրաշու*
*Երաժշտ.՝ Ա. Բաբաջանյանի*
*Մշակումը՝ Ռ. Կարասեֆերյանի*



Հայաստա՛ն աշխարհ, դու մեր կարոտն ես նոր կյանքով անմահ:
Քո ճամփան հնում արնոտ քարոտ էր, դու ծաղկի՛ր հիմա:
Ուր լինենք հավետ մեր լույս փարոսը տունն է հայրենի:
Մաշտոցի հզոր լեզուն վառ հույսն է ամեն մի հայի:

**Կրկներգ**
Փառքդ թռչում է, երգդ կանչում է,
Հողդ դարձրել ես ծով գանձ,
Սիրտդ կայտառ է, միտքդ պայծառ է,
Ա՛զգ իմ փառապանծ:

Բարձրացնենք սիրով մեր սուրբ գավաթը հանուն հայության,
Թող անմար պահի նա իր հավատը հուր և հավիտյան:
Ուր լինենք հավետ մեր լույս փարոսը տունն է հայրենի:
Մաշտոցի հզոր լեզուն վառ հույսն է ամեն մի հայի:

# ԱԶԳԱՅԻՆ ՕՐՀՆԵՐԳ
(Հայրապետական մաղթանք)

*Կոմիտաս*
*Մշակումը՝ Գ.Սարգսյանի*

Lento







S 1
S 2
A
13
f
եր-կար օ-րեր Հա-յոց Հոր: Տե՛ր, ան-սա-սան,
եր-կար օ-րեր Հա-յոց Հոր: Տե՛ր, ան-սա-սան,
եր-կար օ-րեր Հա-յոց Հոր: Տե՛ր, ան-սա-սան,


S 1
S 2
A
19
ff
rit.
պա-հի՛ր դու միշտ Քո իսկ հիմ-նած Մայր Ա-թոռ:
պա-հի՛ր դու միշտ Քո իսկ հիմ-նած Մայր Ա-թոռ:
պա-հի՛ր դու միշտ Քո իսկ հիմ-նած Մայր Ա-թոռ:

Ամէն հայի սրտից բխած՝
լսիր այս ձայն, ով Աստուած.
Երկար կեանք տուր Հայրապետին,
երկար օրեր Հայոց Հօր.
Տէր, անսասան պահիր դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ:

# ԱՆԻ

*Խոսք՝ Հ. Շիրազի*
*Երաժշտ. ՝Մ. Թոշիկյանի*
*Մշակումը՝Ռ. Կարաաեֆերյանի*



Դեռ մի կարոտ ունեմ անհագ՝
Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ,
Լցված կյանքով հազարազանգ՝
Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:
Ախուրյանի ջրերի պես
Զմրուխտ փեշերն համբուրելով
Դառած սիրո մի նոր դղյակ՝
Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:

Հազար տարվա կարոտ ունի
Իմ երազը հազարաթև,
Ա՜խ, թեկուզ լուռ ու ավերակ՝
Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:

Կանցնեմ դարեր ոտք չդրած
Հող ու հանդով իմ պապերի՝
Հայոց խոփի համբույրի տակ
Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:
Վանա ծովի ու Վանի հետ
Ու Ղարսի հետ ու Սևանի,
Իմ Մասիսի լույսերի տակ
Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:

Կրծքիս սեղմեմ Անիս հավերժ,
Բուերի հետ սոխակ դառնամ,
Որպես երգի, վարդի քաղաք
Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:

# ԲԱՐԻ ԱՐԱԳԻԼ

*Խոսք՝ Ա. Գրաշի*
*Երաժշտ.՝ Ալ. Հեքիմյանի*
*Մշակումը՝ Ռ. Կարապետֆերյանի*



Ես ո՛չ անտուն եմ, ո՛չ էլ տարագիր,
Ունեմ հանգրվան, ունեմ օթևան,
Ազատ հայրենիք, երջանիկ երկիր,
Երջանի՜կ, երջանի՜կ երկիր:

**Կրկներգ**
Բարով, արագի՛լ, բախտի արագի՛լ,
Արագիլ գարնա՛ն, արագիլ ամռա՛ն,
Իմ տան մոտ ապրի՛ր, բարի՛ արագիլ,
Բույն հյուսիր ծառին, բարդու կատարին:

Իմ մանուկների աստղերն են ցոլում՝
Լույսով անթառամ, շողերով վառման:
Վշտերս դառան ժպիտներ շողուն,
Ժպիտներ, ժպիտներ շողուն:

**Կրկներգ**

Արագի՛լ, ինձ հետ ուրախ գովերգիր,
Յայլա ու վրան, հանդեր հոտևան,
Արտեր, այգիներ, մանուշակ երկինք,
Մանուշա՛կ, մանուշա՛կ երկինք:

**Կրկներգ**

# ԿՌՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

*Ժողովրդական*
*Մշակումը՝ Ռ. Կարասեֆերյանի*




Բարով եկար, սիրուն կռունկ,
Ի՞նչ լուր բերիր հայրենիքես,
Խոսի՛ր ինձ հետ ազատորեն,
Կյանքս կնվիրեմ ես քեզ:

Տեսա՞ր իմ հայրենյաց տունը,
Գեղեցիկ զարդարված բույնը,
Նորա սիրուն ես տանջված եմ,
Աչքերիցս կտրավ քունը:

Աջաբ տեսա՞ր մեր լեռները,
Հաղորդեցի՞ր դու իմ սերը,
Այն լեռներու պաշտպանողը՝
Արծվի կորյուն ճտերը:

Տեսա՞ր մեր փոքրիկ բուրաստան,
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան,
Եդեմական դրախտավայր, —
Նա կոչվում է Մայր-Հայաստան:

— Այնտեղ ունիս եղբայր ու քույր,
Միջազ, ի՞նչ կսպասես իզուր,
Արի՛ առնեմ իմ թևերուն՝
Գնանք, այնտեղ ուրախացուր:

# ԳԱՐՈՒՆ Է ԳԱԼԻՍ

*Խոսք՝ Հ. Սահյանի*
*Երաժշտ. Ալ. Հեքիմյանի*
*Մշակումը՝ Ռ. Կարապետյանի*




Solo
S
A
լիս,
Դըռ-նե-րը բա - ցեք՝ Դըռ-նե - րը բա - ցեք՝ գա-րուն է գա - լիս,
գա - լիս
ա
գա - լիս,
գա-րուն է գա - լիս:
Աղ-բյուրն աղ-բյու - րին
աղ -
իր զիրկն է կան - չում,
Ի-բար են փար - վում
իո-վերն արթ-նա-
բյուր կան - չում, կան - չում.
փար - վում իո -
ցած:
Ծաղ-կուն-քից ար - բած,
բը-նու-թյունն է շըն - չում,
վեր, իո - վեր.
ա
Քան-դում է մե - ղուն ժիր
ակ-նա-մո - մը բաց:
քան-դում է մե - ղուն ժիր ակ-նա-մո-մը բաց.



Solo
S
A
Հողն է մայ - րու - թյան հըր-ճվան-քից դո - ղում,
ա
Թո՛ղոր հա-վի - տյան միշտ ա-զատ մը - նա։ Թո՛ղոր ոչ մի
ա
ծիլ չը-մը-նա հո - ղում, Ոչմի բույն հավ - քի թա-փուր չը-մը - նա։
ա
ա
ա
Եր-կինք ու եր - կիր մեզ ձայն են տա - լիս՝ - Դըռ - նե - րը բա - ցեք՝
Դըռ - նե - րը բա -
գա - րունն է գա - լիս։
ցեք՝ Դըռ-նե - րը բա - ցեք՝ գա - րուն է գա - լիս,
ա
գա-րուն է գա - լիս։ գա-րուն է գա - լիս։
rit.
Ա

Ձմեռը հալվել, դարձել է առու,
Դարձել է առու, դարձել է վտակ:
Արաքսի հունով նա գնում է հեռու,
Գնում է լցվում է ծովը անհատակ:
Հոգնած թևերը, քսելով ամպին,
Կրծքին դեռ խոնավ ծվենը նրա:
Արագիլն իջել Արաքսի ափին,
Հանգստանում է մի ոտքի վրա:

**Կրկներգ**
Երկինք ու երկիր մեզ ձայն են տալիս,
-Դռները բացե՛ք, գարուն է գալիս:
Դռները բացե՛ք, դռները բացե՛ք՝
Գարուն է գալիս, գարուն է գալիս:

Աղբյուրն աղբյուրին իր գիրկն է կանչում,
Իրար են փարվում հովերն արթնացած:
Ծաղկունքից արբած, բնությունն է շնչում,
Քանդում է մեղուն ժիր ակնամոմը թաց:
Հողն է մայրության հրճվանքից դողում,
Թո՛ղ որ հավիտյան միշտ ազատ մնա:
Թո՛ղ որ ոչ մի ծիլ չմնա հողում,
Ոչ մի բույն հավքի թափուր չմնա:

**Կրկներգ**

# ԵՐԱԶԻ ԻՄ ԵՐԿԻՐ



Երազի իմ երկիր հայրենի,
Հոգսերդ՝ շատ, հույսդ՝ մեծ,
Քարքարոտ երկիր:
Ես մի բուռն եմ քո հողի,
Ես մի ծիլն եմ քո արտի,
Ես մի թերթն եմ քո ծաղկի,
Հայրենի՛ երկիր:
Ես մի բուռն եմ քո հողի,
Ես մի շյուղն եմ քո հասկի,
Ես մի զարկն եմ քո բազկի,
Հայրենի՛ երկիր,
Հայաստա՛ն:

Երազի իմ երկիր հայրենի,
Հոգսերդ՝ շատ, լույսդ՝ մեծ,
Արծվաբույն երկիր:
Իմ պապերն են քեզ շահել,
Իմ եղբայրքն են  քեզ պահել,
Քոնն եմ որդիքն իմ ջահել,
Հայրենի՛ երկիր:
Իմ պապերն են քեզ շահել,
Իմ եղբայրքն են  քեզ պահել,
Քոնն են որդիք իմ ջահել,
Հայրենի՛ երկիր,
Հայաստա՛ն:

# ԵՐԳ ՃԱՆԱՊԱՐՀԻ

*Խոսք՝ Հ. Ռեգիստանի*
*Եր.՝ Կ. Օրբելյանի*
*Մշակումը՝ Ռ. Կարասեֆերյանի*

Moderato




Solo
S
A
2.
Սիրտն իմ քո ճամ-փին
պա, պա, պա, պա, պա, պա, պա, պա, Սիրտն իմ քո ճամ-փին,
պա, պա, պա, պա, պա, պա, պա, պա, Սիրտն իմ քո ճամ-փին,
երգ ու-րախ թող միշտ հըն-չի ու թող դառ-
երգն ու-րախ թող միշտ հըն-չի թող դառ-
երգն ու-րախ թող միշտ հըն-չի թող դառ-
նա թըռ-չուն եվ թըռ-չի, թըռ-չի: Գա-
նա թըռ-չուն թըռ - - - չի: Գա-
նա թըռ-չուն թըռ - - - չի: Գա-


18
Solo
րուն, գա - րուն ե - կավ ծաղ - կով իր քըն-քուշ, գար-
S
րու՞ն, գա - րուն ե-կավ ծաղ - կով իմ քըն-քուշ, Գար-
18
A
րու՞ն, գա - րուն ե-կավ ծաղ - կով իմ քըն-քուշ, Գար-
22
Solo
նան հետ ե - կավ իմ սերն ա - նուշ: Գա - րուն, գա -
3
S
նան հետ ե - կավ իմ սերն ա - նուշ: Գա - րու՞ն, գա -
22
A
նան հետ ե - կավ իմ սերն ա - նուշ: Գա - րու՞ն, գա -
26
Solo
րուն ե - կավ ծաղ - կով իր քըն-քուշ, գար - նան հետ
S
րուն ե-կավ ծաղ - կով իմ քըն-քուշ, Գար - նան հետ
26
A
րուն ե-կավ ծաղ - կով իմ քըն-քուշ, Գար - նան հետ


30
Solo
S
A
3
Da capo al Coda
Coda
ե-կավ իմ սերն ա-նուշ:
ե-կավ իմ սերն ա-նուշ:
Պամ, պա, պամ, պամ,
34
պամ, պա, պամ, Գար - նան հետ ե-կավ իմ սերն ա-նուշ: Պամ, պամ,
գար - նան հետ ե-կավ իմ սերն ա-նուշ:
38
գար - նան հետ ե-կավ իմ սերն ա - նուշ:
պամ,պամ, ե - կավ իմ սերն ա - նուշ: ու-wa...

Հե՜յ, ճամփե՛ք՝ ոլոր-մոլոր և արև՛ անմար,
Ես կտամ կյանքն իմ բոլոր ձեր սիրո համար:
Հե՜յ, դաշտե՛ր, դաշտե՛ր բարի, ձեզ էլ բյուր բարև,
Ինձ օգնեք գնտեմ յարիս, իմ պայծա՛ռ արև:

**Կրկներգ**
Սիրտն իմ քո ճամփին, երգն ուրախ թող միշտ հնչի
Ու թող դառնա թռչուն և թռչի, թռչի,
Գարո՛ւն, գարուն եկավ ծաղկով իր քնքուշ,
Գարնան հետ եկավ իմ սերն անուշ:

Ես ճամփա ելա ձեզին վառ սիրով անշեջ:
Չանսալով հողմին, մեգին՝ պիտ քայլեմ անվերջ:
Հե՜յ, ճամփե՛ք, ճամփե՛ք՝ բարի, ձեզ էլ բյուր բարև,
Ինձ օգնեք գտնեմ յարիս, ի՛մ լույս, ի՛մ արև:

**Կրկներգ**
Սիրտն իմ քո ճամփին, երգն ուրախ թող միշտ հնչի
Ու թող դառնա թռչուն և թռչի, թռչի,
Գարո՛ւն, գարուն եկավ ծաղկով իմ քնքուշ,
Գարնան հետ եկավ իմ սերն անուշ:

# ԵՐԵՎԱՆ

*Խոսք և երաժշտ.՝ Վ. Գևորգյանի (Ֆորշ)*
*Մշակումը՝ Ռ. Կարապետյանի*




42
Ես ու դու ու-նենք այ-սօր մի նոր ճա-նա-պարհ,
47
քեզ հա-մար, քեզ-նով ու միշտ, քեզ
52
հետ ենք Ե-րե-վան: քեզ հետ իմ Ե-րե-վան, Ե-րե-
56
վա-նը տուն ու շենք չէ, Ե-րե-վա-նը մենք ենք, Ե-րե-
60
վանն ան-կեղծ սի-րե-լը չը-գըր-ված օ-րենք է: Ե-րե//
1.
64
2.
8
//է
Ես ու դու ու-նենք այ-սօր
69
մի նոր ճա-նա-պարհ, Քեզ հա-մար,
73
քեզ-նով ու միշտ, Քեզ հետ ենք Ե-րե-վան:
77
քեզ հետ իմ Ե-րե-վան, Ե-րե-վա-նը
81
տուն ու շենք չէ, Ե-րե-վա-նը մենք ենք, Ե-րե-վանն ան-
85
1.
2.
կեղծ սի-րե-լը չը-գըր-ված օ-րենք է: Ե-րե// //է: Ե-րե-
89
վա-նը մենք ենք, Ե-րե-վա-նը մենք ենք: Ե-րե-վա-նը
94
1.
2.
մենք ենք, Ե-րե-վա-նը մենք ենք: Ե-րե// ենք:

Քարին արև նվիրեմ ու մի քիչ էլ սեր,
Մեր քաղաքը կստացվի՝ Երևանը մեր:
Բարի դեմքով ծերունի, իմ փոքրիկ քաղաք,
Հարազատ ամեն փողոց ու ամեն մի բակ:
Ես ու դու ունենք այսօր մի նոր ճանապարհ:
Քեզ համար, քեզնով ու միշտ,
Քեզ հետ ենք Երևա՛ն, քեզ հետ իմ Երևան:

**Կրկներգ**
Երևանը տուն ու շենք չէ, Երևանը մենք ենք,
Երևանն անկեղծ սիրելը՝ չգրված օրենք է:

Մայր ասելով քաղաքին, մոր պես գուրգուրենք,
Մեր ժպիտն ու ջերմ խոսքերը, սերը նվիրենք:
Ամեն քաղաք աշխարհում զարկող սիրտ ունի,
Երևա՛ն, սրտից բացի, դու ունես հոգի:
Ես ու դու ունենք այսօր մի նոր ճանապարհ:
Քեզ համար, քեզնով ու միշտ,
Քեզ հետ ենք Երևա՛ն, քեզ հետ իմ Երևան:

**Կրկներգ**
Երևանը մենք ենք, Երևանը մենք ենք
Երևանը մենք ենք, Երևանը մենք ենք:

# ԵՐԵՎԱՆՅԱՆ ԵՐԳԵՐԻ ՇԱՐՔ

*Մշակումը՝ Ռ. Կարաաեֆերյանի*




Սիր - տըս քեզ է եր - գում ու եր - գում է մի - այն քեզ հա -
մար: Մեր ա - նուշ Հա - յաս - տա - նում, մեր քըն - քուշ բու - րա - ստա -
նում,Դու ժըպ - տում ես, Ե - րե-վա՛ն: Մեր ա - նուշ Հա-յաս-տա -
նում, մեր քըն - քուշ բու-րա-ստա - նում,Դու ժըպ - տում ես, Ե - րե-վա՛ն:
12
Այս գար-նան շըն-չով, ա-մե-նուր հըն-չող,
ծնըն ես մեր հո-գու, ուղղ-ված վաղ-վան,
Արթ-նա-ցի՛ր քը-նից, քո ա-մեն տը-նից լույս թող ճա-ռա-
գի, ի՛մ Ե-րե - վան:
Ա-մեն բաց-վող ա-ռա-վոտ
քեզ եր-գեմ կըր-կին, Ա-մեն իջ-նող ե-րե-կո նո-րից թող վառ-վեն
լույ - սե - րը, Եվ փար-վեն քո տա - ռա - պած ու կա - րոտ գըր - կին՝
Քեզ նը - վի - րե - լով ողջ իմ սե - րը:


93
Moderato
Դու ու-նես ան - ցյալ, քա-ղա՛ք իմ, դա-րա-վոր ան - ցյալ,
97
Դու ե-ղար հա - յոց ամ-րոց - բերդ, մայր քա-ղաք դար - ձար,
101
Պատ-մու-թյան դա - ժան հող-մի մեջ շատ ցա-վեր տե - սար,
105
Բայց շո-ղաց կյան - քիդ մի նոր էջ, այս փառ-քին հա - սար:
109
Vivo
Դու մեզ հա-մար նո-րա - շունչ Ա-նի ու Վան, հույս և հա-վատ հա-յու - թյան,
113
Քո սըր-բու-թյամբ դու ա - մեն հա-յի մեջ կաս, մեր սի-րե - լի Ե-րե - վան:
117
մեր սի-րե - լի Ե - րե - վան:

*Խոսք՝ Վ. Հարությունյանի*
*Երաժշտությունը՝ Ա. Բաբաջանյանի*

Այստեղ եմ ծնվել ես, այստեղ մեծացել,
Այս ջուրն եմ խմել սառնորակ,
Հազար ճանապարհ ես դու իմ դեմ բացել,
Իմ լավ, հարազատ իմ քաղա՛ք:
Քարդ քարի դեմ շարել,
Քեզ հետ հասակ եմ առել,
Իմ Երևան, քո ամեն շենքի հետ
Ես իմ կյանքն եմ կապել առհավետ:
Քեզ միշտ սիրել եմ, իմ վարդագո՛ւյն ընկեր,
Քեզնով ապրել եմ, քեզ միշտ երգել,
Դո՛ւ՝ անխավար լույսի տուն, Երևա՛ն:
Ամեն հայի հույսի տուն, Երևան:

*Խոսք՝ Հ. Ղուկասյանի*
*Երաժշտությունը՝ Կ. Օրբելյանի*

Քո երկինքը ծով է կապուտակ, դու կանաչ ես ու ծաղկուն,
Ինձ ժպտում են արևաթագ քո շենքերը վարդագույն:
Քո գրկում է վարդը իմ բացվել, ա՜խ, քեզնից լավ վայր չկա,
Քո գրկում եմ երջանկացել, ո՛չ, քեզնից լավ վայր չկա:
Սիրտս քեզ է երգում, սերն ես իմ անմար,
Սիրտս քեզ է երգում ու երգում է միայն քեզ համար:
Մեր անուշ Հայաստանում, մեր քնքուշ բուրաստանում,
Դու ժպտում ես, Երևա՛ն,
Մեր անուշ Հայաստանում, մեր քնքուշ բուրաստանում
Դու ժպտում ես, Երևա՛ն:

*Հեղինակ՝ Ք. Մանարյանի*

Այս գարնան շնչով, ամենուր հնչող, ձոնն ես մեր հոգու ուղղված վաղվան,
Արթնացի՛ր քնից, քո ամեն տնից լույս թող ճառագի, ի՛մ Երևան:
Ամեն բացվող առավոտ քեզ երգեմ կրկին,
Ամեն իջնող երեկո նորից թող վառվեն լույսերը,
Եվ փարվեն քո տառապած ու կարոտ գրկին՝
Քեզ նվիրելով ողջ իմ սերը:

*Խոսք՝ Ա. Սահակյանի*
*Երաժշտությունը՝ Ա. Բաբաջանյանի*

Դու ունես անցյալ, քաղա՛ք իմ, դարավոր անցյալ,
Դու եղար հայոց ամրոց բերդ, մայր քաղաք դարձար,
Պատմության դաժան հողմի մեջ շատ ցավեր տեսար,
Բայց շողաց կյանքիդ մի նոր էջ, այս փառքին հասար:
Դու մեզ համար նորաշունչ Անի ու Վան, հույս և հավատ հայության,
Քո սրբությամբ դու ամեն հայի մեջ կաս,
Մեր սիրելի՛ Երևան:

# ԻՄ ՆՈՐ ՏԱՐԻ

*Խոսք՝ Վ. Անդրեասյանի*
*Երաժշտ.՝Ա. Գրիգորյանի*
*Մշակումը՝ Ռ.Կարասեֆերյանի*




րի՛, մաք-րի՛ր քո բա - րու - թյամբ:
Պահ է, ա՜խ, պահ է մը-նում, Որ հըն - չեն զան-գեր, որ եր -
գի նո - րը, Պահ է, լոկ պահ է մը-նում մեր տար -
վան ան-ցյալ: Համր է քա - ղա - քը լու - սե, Այդ քայ -
լերն են քո ու սպա - սու - մը մեր: Համր է աշ -
խար-հը լու - սե, բայց կը - գաս, Օրհ-նյա՜լ: Ի՛մ նոր տա-րի,
հեռ-վից ա-հա լույսն է քո մո - տե - նում, Տա -
րի՛, ու-րի՜շ տա-րի, դու նը - վեր՝ սեր ու խըն-դու - թյան: Դու իմ բա -
րի՜, բա-րի այն-քա՜ն, մեզ նե - րում ես ու վեր հա - նում, Ա -
րի՛, մաք-րի՛ր քո բա - րու - թյամբ:

Համր է քաղաքը լուսե,
Գիշերվա գրկում քարացել է նա,
Համր է աշխարհը լուսե,
Վերջն է այս տարվա:
Ո՞վ է նա, ո՞վ է նայում,
Ինչ պահեր եկան, ինչ անդորր է այս,
Ո՞վ է նա, ո՞վ է նա, ո՞վ է գալիս
Ու ժպտում ահա:

**Կրկներգ**
Իմ  Նոր տարի, հեռվից ահա լույսն է քո մոտենում,
Տարի՛, ուրի՜շ տարի, դու նվեր՝ սեր ու խնդության:
Դու իմ բարի՜, բարի այնքա՜ն,  մեզ ներում ես ու վեր հանում,
Արի՛, մաքրի՛ր քո բարությամբ:

Պահ է, ա՜խ, պահ է մնում,
Որ հնչեն զանգեր, որ երգի նորը,
Պահ է, լոկ պահ է մնում
Մեր տարվան անցյալ:
Համր է քաղաքը լուսե,
Այդ քայլերն են քո ու սպասումը մեր:
Համր է աշխարհը լուսե,
Բայց կգաս,
Օրհնյա՜լ:

**Կրկներգ**

# ԻՄ ՍՐՏԻ ՄԱՅՐԱՔԱՂԱ՛Ք

*Խոսք՝ Ա. Բարսեղյանի*
*Երաժշտ.՝ Ա. Մարտիրոսյանի*
*Մշակումը՝ Ռ. Կարասեֆերյանի*



Ինձ հիշում է Երևանը, իմ այսօրն ու երեկվանը,
Ու երգում է շատրվանը իմ սրտի սիրո մասին:
Երկու սիրտ երբ հանդիպում են, Երևանը միշտ ներկա է,
Այս քաղաքն է, որ ստիպում է սիրահար մնալ հավետ:

**Կրկներգ**
Իմ սրտի մայրաքաղա՛ք, հարատև արև ու կյանք,
Երևա՛ն դու սերն ես հայերի:
Իմ սրտի մայրաքաղա՛ք, բարի օ՛ր, գիշե՛ր  բարի,
Երևա՛ն, դու ի՛մ տոն, որ երբեք չի դադարի:

Շենքն ու բակն ու հարևանս, իմ փողոցն ու նստարանը,
Մոտ ենք ես ու Երևանս, մոտ ենք շա՜տ  ու հարազատ:
Դու ծնվել ես որ ապրեմ ես, քո սրտի զարկով սիրեմ քեզ,
Երևա՜ն, դու առասպել ես, ալեզարդ երիտասա՛րդ:

**Կրկներգ**

# ԽՈՐԱՆ ԼՈՒՍՈ

*Խոսք և երաժշտ.՝ Ա. Մարտիրոսյանի*
*Մշակումը՝ Ռ. Կարասեֆերյանի*

Andante







6
cresh.
S1
S2
A
Հա - յի խիղճն ես դու, կանչն ես սուրբ հո - գու, Սըր-բա -
Հույսն է հա - վի - տյան քո մա - գա - ղա - թի՝ գը - րա -
8
1.
2.
f
վայրն ես հա - յու - թյան: Դա - րե - րի մեջ կոփ - ված
բա - ռը ոս - կե - - - դար:
12
3
մի - ա - ծնի իմ սուրբ հան - գըր - վան, խա - չե - րից վեր հառ - նած


14
S1
սըր - բա - լույս իմ խո - րան,
Դա - րե - րի մեջ կոփ - ված
S2
սըր - բա - լույս իմ խո - րան,
Դա - րե - րի մեջ կոփ - ված
A
սըր - բա - լույս իմ խո - րան,
Դա - րե - րի մեջ կոփ - ված
16
S1
մի - ա - ծնի իմ սուրբ հան - գըր - ված,
Հա - յաս - տան աշ - խար - հի
S2
մի - ա - ծնի իմ սուրբ հան - գըր - ված,
Հա - յաս - տան աշ - խար - հի
A
մի - ա - ծնի իմ սուրբ հան - գըր - ված,
Հա - յաս - տան աշ - խար - հի
18
S1
mf
սուրբ օր - րան:
Ա - մեն:
Ա -
S2
p
սուրբ օր - րան:
Ա - մեն:
Դու հը - նա - մյա լույ - սի, մըտ - քի տա - ճար,
Վեհ են զան - գե - րըդ մարդ - կու - թյան հա - մար,
A
p
սուրբ օր - րան:
Ա - մեն:
Դու հը - նա - մյա լույ - սի, մըտ - քի տա - ճար,
Վեհ են զան - գե - րըդ մարդ - կու - թյան հա - մար,


22
S1
S2
A
մեն:
Ա -
վեր խո - յա - ցած կա - մար - նե - րով կերտ -ված
Լի են գոր - ծե - րըդ բա - րու - թյամբ ան - մար,
24
մեն:
բաց եր - կըն - քի տակ թան - գա -
կանչն ես սուրբ հո - գու, Սըր - բա -
cresh.
եվ դա - րեր ի վեր
Հա - յի խիղճն ես դու,
Ա - - - - մեն:
26
1.
2
f
րան ես նո - րո - րյա:
վայրն ես հա - յու - - - թյան:
Ա - - մեն
Դա - րե - րի մեջ կոփ -ված
Ա - մեն: Ա - մեն: Ա - մեն:


30
S1
Ա - - - - - մեն Ա - - - մեն
S2
միածնի իմ սուրբ հանգրվան, խաչերից վեր հառնած
A
միածնի իմ սուրբ հանգրվան, խաչերից վեր հառնած
32
S1
Ա - - - մեն Ա - - - մեն
S2
սրբալույս իմ խորան, Դարերի մեջ կոփված
A
սրբալույս իմ խորան, Դարերի մեջ կոփված
34
S1
Ա - - - - - մեն Ա - - - մեն
S2
միածնի իմ սուրբ հանգրվան, Հայաստան աշխարհի
A
միածնի իմ սուրբ հանգրվան, Հայաստան աշխարհի


36
S1
S2
A
Ա - - - մեն Ա - - - մեն
p
3
սուրբ օր - րան: Ա - - - մեն: Ու պի - տի
սուրբ օր - րան: Ա - - - մեն Ու պի - տի
38
mp
Ա - - - մեն Ա - - - - մեն
գան ար - շա - լույ - սեր մեծ հայ - տնու - թյան ու մեծ կյան - քի եվ կը - բաց -
cresh.
40
Ա - - - մեն Ա - - - - մեն: ա - ռա -
mf
վեն ան - թիվ դըռ - ներ հա - զար ու բյուր հո - գի - նե - րի ա - ռա -


42
S1
քենք դե - պի վեր խըն - կա - բույր ա - ղոթք - ներ: Ա - մեն
S2
քենք դե - պի վեր խըն - կա - բույր ա - ղոթք - ներ: Ա - մեն
A
քենք դե - պի վեր խըն - կա - բույր ա - ղոթք - ներ: Ա - մեն
45
S1
f
Ա - - - մեն Ա - - - - - մեն
S2
f
3
Դա - րե - րի մեջ կոփ - ված մի - ա - ծնի իմ սուրբ հան - գըր - վան,
A
f
3
Դա - րե - րի մեջ կոփ - ված մի - ա - ծնի իմ սուրբ հան - գըր - վան,
47
S1
Ա - - - մեն Ա - - - մեն
S2
3
խա - չե - րից վեր հառ - նած սըր - բա - լույս իմ խո - րան,
A
3
խա - չե - րից վեր հառ - նած սըր - բա - լույս իմ խո - րան,


49
S1
Ա - - - մեն
Ա - - - - - մեն
S2
Դա - րե - րի մեջ կոփ - ված մի - ա - ծնի իմ սուրբ հան - գըր - վան,
A
Դա - րե - րի մեջ կոփ - ված մի - ա - ծնի իմ սուրբ հան - գըր - վան,
51
S1
Ա - - - - մեն
Ա - մեն
S2
Հա - յաս - տան աշ - խար - հի սուրբ օր - րան
A
Հա - յաս - տան աշ - խար - հի սուրբ օր - րան:
53
S1
Դա - րե - րի մեջ կոփ - ված մի - ա - ծնի իմ սուրբ հան - գըր - վան,
S2
Դա - րե - րի մեջ կոփ - ված մի - ա - ծնի իմ սուրբ հան - գըր - վան,
A
Դա - րե - րի մեջ կոփ - ված մի - ա - ծնի իմ սուրբ հան - գըր - վան,


55
S1
խա - չե - րից վեր հառ - նած սըր - բա - լույս իմ խո - րան,
S2
խա - չե - րից վեր հառ - նած սըր - բա - լույս իմ խո - րան,
A
խա - չե - րից վեր հառ - նած սըր - բա - լույս իմ խո - րան,
57
S1
Դա - րե - րի մեջ կոփ - ված մի - ա - ծին իմ սուրբ հան - գըր - ված,
S2
Դա - րե - րի մեջ կոփ - ված մի - ա - ծին իմ սուրբ հան - գըր - ված,
A
Դա - րե - րի մեջ կոփ - ված մի - ա - ծին իմ սուրբ հան - գըր - ված,
59
S1
ff
Հա - յաս - տան աշ - խար - հի սուրբ օր - րան Ա - մեն: Ա - մեն: Ա - մեն:
S2
ff
Հա - յաս - տան աշ - խար - հի սուրբ օր - րան Ա - մեն: Ա - մեն: Ա - մեն:
A
ff
Հա - յաս - տան աշ - խար - հի սուրբ օր - րան: Ա - մեն: Ա - մեն: Ա - մեն:

Վեհ են զանգերդ մարդկության համար,
Լի են գործերդ բարությամբ անմար,
Հայի խիղճն ես դու, կանչն ես սուրբ հոգու,
Սրբավայրն ես հայության:
Հին են վանքերդ իմ Վաղարշապա՛տ,
Քո սրբագործ կոթողներով ծնված,
Հույսն է հավիտյան քո մագաղաթի՝
Գրաբարը ոսկեդար:

**Կրկներգ**
Դարերի մեջ կոփված Միածնի ի՛մ սուրբ հանգրվան,
Խաչերից վեր հառնած, սրբալույս ի՛մ խորան:
Դարերի մեջ կոփված միածնի ի՛մ սուրբ հանգրվան,
Հայաստան աշխարհի սուրբ օրրան: Ամե՛ն:

Դու հնամյա լույսի, մտքի տաճար,
Վեր խոյացած կամարներով կերտված,
Եվ դարեր ի վեր բաց երկնքի տակ
Թանգարան ես նորօրյա:
Վեհ են զանգերդ մարդկության համար,
Լի են գործերդ բարությամբ անմար,
Հայի խիղճն ես դու, կանչն ես սուրբ հոգու,
Սրբավայրն ես հայության:

**Կրկներգ**

Ու պիտի գան արշալույսներ
Մեծ հայտնության ու մեծ կյանքի,
Եվ կբացվեն անթիվ դռներ
Հազար ու բյուր հոգիների,
Առաքենք դեպի վեր, խնկաբույր աղոթքներ:
Ամե՛ն:

**Կրկներգ**

# ԿԱՐՄԻ՜Ր ՎԱՐԴԱՆ

*Աշուղ Ջիվանի*
*Մշակումը՝ Ռ. Կարասեֆերյանի*



Ավարայրի դաշտը ներկեց արյունդ,
Կարմի՛ր Վարդան, հզո՛ր Վարդան, քա՛ջ Վարդան:
Ազգէ-ազգ կհիշվի անմահ անունդ,
Կարմի՛ր Վարդան, հզո՛ր Վարդան, քա՛ջ Վարդան
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

Մեռար, թողիր անմահ անուն, հիշատակ,
Քո գործքերով դարձար բարի օրինակ:
Դու սուրբ գործի համար եղար նահատակ,
Անմա՛հ Վարդան, հզո՛ր Վարդան, քա՛ջ Վարդան
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

Քեզ գրգռեց ջերմ հայրենյաց եռանդը,
Պահպանեցիր փրկչիդ տված ավանդը:
Դուրս վանեցիր զրադաշտյան աղանդը,
Դու վե՛հ Վարդան, հզո՛ր Վարդան, քա՛ջ Վարդան
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

# ԿԻԼԻԿԻԱ

*Խոսք՝ Ն. Ռուսինյանի*
*Երաժշտ. Գ. Երանյանի*
*Մշակումը՝ Կ. Սարգսյանի*



Երբոր բացուին դռներն յուսոյ,
Եվս մեր երկրէն փախ տայ ձըմեռ,
Չըքնա՜ղ երկիրն մեր Արմենիոյ,-
Երբ փայլե իւր քաղցրիկ օրեր.
Երբոր ծիծառն իր բոյն դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերեւ՝
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ՛աւարտի,
Հասակ մը, ուր հոգին ի տենչ՝
Յիշատակաց իւր կարօտի.
Յորժամ քնարն իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարեւ՝
Երթամ  ննջել իմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

# ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ԵՐԳԱՇԱՐ

## I

*Մշակումը՝ Ռ. Կարասեֆերյանի*



2


Allegro
S
A
Վայ, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜:
Վայ, լե՜, Վայ, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜:
Աղ - ջի՛, ա - նու - նըդ Շու-շան, հո՜պ գյուլ ա յա-րըս,
Ա - րի եր-թանք սուրբ Նը-շան, թո՜փ գյուլ ա յա-րըս,
հո՜պ հո՜պ հո՜պ գյուլ ա յա - րըս, գյուլ ա յա - րըս,
թո՜փ թո՜փ թո՜փ գյուլ ա յա - րըս, գյուլ ա յա - րըս,
Յա - րըս խը - ռո-վել ա, կո - ղին ը - ռո-վել ա: -
Յա - րըս խը - ռո-վել ա, կո - ղին ը - ռո-վել ա: -
Ես Մա-սը-սի ծե - րըն եմ, հո՜պ գյուլ ա յա-րըս:
Ես իմ խոս-քի տե - րըն եմ, թո՜փ գյուլ ա յա-րըս:
հո՜պ հո՜պ հո՜պ գյուլ ա յա - րըս, գյուլ ա յա - րըս,
թո՜փ թո՜փ թո՜փ գյուլ ա յա - րըս, գյուլ ա յա - րըս:
Vivace
Թագ - վո - րի՛ մեր դուս ա-րի, տե՛ս, քե հի՞չ-ե՞ր եկք քե - րե,
Թագ - վո - րի՛ մեր դուս ա-րի, տե՛ս, քե հի՞չ-ե՞ր եկք քե-րե,
Թագ-վո-րի՛ մեր դուս ա-րի, քե թախտ ավ - լող եկք քե-րե,
քե հաց թը - խող եկք քե-րե,
ճախ - րակ մա - նող եկք քե-րե,
քե գլուխ դըմ-փող եկք քե-րե:
Թագ-վո-րի՛ մեր դուս ա-րի, քե թախտ ավ - լող եկք քե-րե,
քե հաց թը - խող եկք քե-րե,
ճախ - րակ մա - նող եկք քե-րե,
քե գլուխ դըմ-փող եկք քե-րե:

Սո՜նա յա՜ր, Սո՜նա յա՜ր, Սո՜նա սիրուն, Սո՜նա յա՜ր,
Վարդավառը գալիս ա, Սո՜նա յար, Սո՜նա յա՜ր
Ծաղիկը ցնծալիս ա, Սո՜նա սիրուն, Սո՜նա յա՜ր
Ա՛յ գյուղում կանչող աղջիկ, Սո՜նա յար, Սո՜նա յա՜ր
Ձենդ ծլվլալիս ա, Սո՜նա սիրուն, Սո՜նա յա՜ր:

Անձրև եկավ շաղալեն, ուռ ու տերև դողալեն,
Վայ լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜:
Հրես եկավ իմ ախպեր՝ ալ ձին տակին խաղալեն,
Վայ լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜:
Խալիչեքը փռել եմ, նախշուն բարձեր դրել եմ,
Վայ լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜:

-Աղջի՛, անունըդ Շուշան, հո՞պ գյուղ ա յարըս,
Արի երթանք Սուրբ Նըշան, թո՞փ գյուլա յարըս,
-Յարըս խըռովել ա, կողին ըռովել ա
- Ես Մասըսի ծերըն եմ, հո՞պ գյուլա յարս,
Ես իմ խոսքի տերըն եմ, թո՞փ  գյուլա յարս:

Թագվորի՛ մեր, դուս արի, տե՜ս, քե ինչե՞ր ենք բերե,
Թագվորի՛ մեր, դո՛ւս արի,  քե թախտ ավլող ենք բերե,
Թագվորի՛ մեր, դո՛ւս արի, քե հաց թխող ենք բերե,
Թագվորի՛ մեր, դո՛ւս արի, ճախրակ մանող ենք բերե,
Թագվորի՛ մեր, դո՛ւս արի, քե գլուխ դմփող ենք բերե:

# ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ԵՐԳԱՇԱՐ




27
S
A
16
խըն - կի ծառ, Գյու-լում ջան,
պըզ-տիկ յա՛ր,
վը - րեն քառ,
օ - րոր տար,
1.Էս - օր ուր-բաթ է պաս է.
Սըր - տիկ ար - ծա - թէ թաս է:
2.Սըր-տիկ մա-լուլ մի մը - նա,
Աշ - խարհ մար-դու չի՛ մը - նա,
34
դէ՜ հէ՜ զը՜ն-գը, զը՜ն-գը, դէ՜ հէ՜ ջան:
Ջուր կու - գա վե - րին սա-
Կը - թա - փի մար - մար քա-
վերջում 4 անգամ կրկնել, վերջին 2 անգամը արագացնելով
41
րեն, սարն ո - լո - րե - լեն,
րեն, կաթ - կաթ ծո - րե - լեն:
րեն, սա - րեն, սարն ո - լո - րե - լեն,
րեն, քա - րեն կաթ - կաթ ծո - րե - լեն:
47
Allegretto moderato
1.Առ - նեմ էր - թամ իմ յա - րը, առ - նեմ էր - թամ էն սա - րը:
2.Յար եմ գը - տել նա - ռի պես, ըն - կու - զե - նու ծա - ռի պես:
55
Առ - նեմ էր - թամ էն սա - րը, սեր ա - նե - լով իմ յա - րը:
Ուր որ էր - թամ կայ-նած է էն մեր սի-րուն սա - րի պես:

Ալագյազ սարն ամպել ա, վայ լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜:
Աղբերն իր ծին թամբել ա: Իմ մայրի՜կ ջան, իմ մայրի՜կ ջան:

Մեր դռանը խընկի ծառ, Գյուլում ջա՛ն,
